


ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ
Ե. ԲՈՒՌՄԵՆՆ

Նամակ կամ որ եւ է
գրութիւն պէտք է ուղղել
Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ ԴՐԱԳՐԻ
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԻՆ

ԵԳԻՊՏՈՒ ՂԱՄԱՐ	
Տարեկան ուր դահլիճ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան Ծրակ	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԻՆ ԿԱՆՆԻԿ
Եւ թղթատարի ծախքը
Խոնարարութեան վրայ է :

Խոնարարութեան ուղղուած
գրութիւնք ևս չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՆՈՒԹԻՒՆԻՔ
Կանխիկ վճարելի են


F. TOROSSIAN
Direct. propr. du journal arménien
ARCHALOUYCE
LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՆՈՐԻՆ Ս. ՕՍՈՒԹԵԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԻ ԱՆՏԻՊ ԵՐԿՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ



Յառաջիկայ Զորեքաթիւնն սկսեալ «Ար-
շալոյս» ի Տպարանին մէջ պիտի սկսինք հրա-
տարակութիւնը ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՍՈՒԹԵԱՆ
ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԿԱՌԱՂՎԻՈՍ ՎԵՀԱՓԱՌ
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ մի անտիպ Աշխատասի-
րութեան «ՎԵՐՉԱԼՈՅՍԻ ԶԱՅՆԵՐԸ» անունով,
որ Վեհափառ Հեղինակը յանձնած է մեր
աշխատանքից «Այօ» ին :

Վեհափառ Հայրապետը, իր այդ անտիպ
երկասիրութեան բոլոր իրաւունքները շնոր-
հած և տրամադրած է մասնաւորապէս հայ
կանանց համար հրատարակելի «Արտեմիս»
հանդիսին ի նպաստ :


«ՎԵՐՉԱԼՈՅՍԻ ԶԱՅՆԵՐԸ» պիտի հրա-
տարակենք մաքուր տպագրութեամբ, Վե-
հափառ Հեղինակի վերջին մի կենդանագիր
պատկերովը և յառաջաբանով մը, որ
պատրաստած է մեր աշխատակիցը :

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ԿԵՐՔՈՒՄ

ՇԷՅԻ ԷՔՄԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՒՈՒԱԾԻՆ

ԱՌ-ԹԻԻ

(Շարժ. ևսխորդ թիւն ևս վերջ)



Հակառակ մեր բոլոր ջանքերուն, որ
առաջնորդարանի կողմէ «Բիզանդիոն» ի
ուղղուած նամակի պարունակութիւնը շատ
համառօտ կերպով վերլուծենք,

Հակառակ այն խնամեալ հոգածու-
թեան՝ որ ի գործ գրուած է Առաջնորդա-
րանի հոկտոբերուն կողմէ, որպէսզի եղած
փաստները մանրացոյցի տակ գրուած հան-
րութեան ներկայացուի,

Հակառակ լարատաղացի ճարպիկ դե-
րերով իրողութիւնները չփոխելու՝ որ հան-
րութիւնը կամ լաւ ևս անոր ողջամիտ գա-
սակարգը իրենց խաղացած խեղկատակ դե-
րերուն աւելի ուշադրութիւն դարձնեն քան
թէ ազգային անտուկին սպառնացող կարե-
ւոր փաստին վրայ խորհրդածեն,

Իրաձեալ կարելի եղած չ'է անուշ սե-
ղը կապելու գրութիւնը ազդեցիկ ներգոր-
ծութիւն մը ընել ա՛յն մտքերուն վրայ, ու-
րոնք ամեն ինչ մօտէն ուսումնասիրած, ա-
ռաջնորդարանի շրջանակին մէջ դարձած բու-
լոր էնթրիկներուն ուղն ու ծուծը թափան-

ցած, և հոն բոյն դրած բարգի ուստայնե-
րուն կենսաբարձ նպատակին ծանօթ են :

Կարելի չ'է որ մարդ խղճահարութիւն
չ'ունենայ, տեսնելով որ քիչ շատ խելքի,
մտքի և ստեղծ համբաւի տէր անձնաւորու-
թիւններ՝ կ'երթան առաջնորդարանի ֆոյխ-
ներուն անկիւնները լարուած սարգի ու-
տայնները հրատու մամուլներուն ճանճի
նման կեր ըլլալու :

Բայց ո՞րչափ ընդարձակել ուզենք այս
խորհրդածութիւնները, դարձեալ չ'պիտի
կարենանք ամբողջել իրողութիւնները ա՛յն-
պէս, ինչպէս որ փափաքելի է. որովհետեւ
անոնք անհամեմատ շատ են և ա՛յնչափ շատ,
որ միջոցները՝ պիտի կրնանք ըսել, ան-
բաւական կրնան ըլլալ :

Անցնինք ուրեմն մեր նիւթին՝ վերջին
խօսքը ըսելու համար մեր միամիտ Տէրտե-
րին, որուն «Բիզանդիոն» ի միջոցաւ ըսել
կուտային :

Հաշիւն յստ՝ կ,

Երեսն իս անունակ

Տէրտէրը՝ և իրեն հետ այդ հերքմա-
գիրը յղացողները, ի մէջ այլոց կը խոս-
տովանին թէ՛ արդարեւ Առաջնորդարանը
640 ոսկւոյ տուգանքի մը վճիռը երկիցս
հագած է և ատոր դէմ միայն ազօտ յոյս
մը կը տածեն որ վերաքննութեան մէջ
պիտի շահին կամ գոնէ զեղջ մը պիտի
ըլլայ անկէ, ու յետոյ կուզան հաշուել
թէ՛ եթէ իսկապէս իրենք սուգանք մը
վճարելու պարտաւոր ըլլան, դա՛ ո՛չ թէ
պէտք է 1000 ոսկւոյ հասնի, այլ 3705 զրուշ
և քսան ոսկի ալ դատարանի քննիչներուն՝
որ կրնէ 5705 զրուշ. ու այս փաստի փոք-
րութիւնն է որով կուզեն միտքարուել ինչ-
պէս կերելի, և միւսնոյն ատեն արդարա-
նալ, ժողովրդի աչքին փոշի փչելով :

Բայց ենթացինք թէ՛ այդ փաստը փոք-
րիկ ըլլայ. ոսկի 50 էն 100 ոսկիին մէջ.
սա դարձեալ փաստ մը չ'է. երեկ թէ Ա-
ռաջնորդարանի տղրուկները կը մտածեն
ա՛յնպէս, ինչպէս որ մէկը պիտի ընէր մեծ
գուճար մը գողնալու համար պատ մը ծա-
կած ատեն. երբ փոխանակ իրեն յուսա-
ցածը ձեռք անցնելու, անոր միայն մէկ
ուրթերորդը յաջողէր ձեռք բերել, ըսել է
որ մտադրած գուճարէն պակաս բան մը
իրեն հասած ըլլալուն համար, պահ ծակոյ
ըլլալէ կը դադրէր. ենթացինք թէ՛ կառա-
վարութիւնը ձեռքակալէր զինքը. իրեն
պատիժը արդեօք փոխանակ պատ ծակովի
տեսակէն տալու, ձեռք անցուցած գու-
մարին համեմատութեամբ կուտար :


Ո՛չ, առաջնորդարանի տղրուկները .
ո՛չ. (յարգելի բացառութիւնները չ'մոռ-
նանք) դուք այս խնդրոյն մէջ - եթէ ձեր
գրածներն ալ ընդունինք, ինչ որ յայտնի
և որոշ է թէ շիտակ չեն - դարձեալ ու
միշտ յանցաւոր էք ա՛յնչափ, որչափ յան-
ցապարտ պիտի ըլլայիք եթէ փաստին քա-
նակութիւնը բարձրանար 1000 - 2000 կամ
աւելի ոսկիներու :

Իսկ՝ ըստ մեր ազգային օրինաց գիտէ՞ք
ինչ է ձեր պատիժը, որուն քիչ ատենէն
ենթակայ պիտի ըլլաք. - Գրիստոս վերջին
դատաստանէն առաջ անգամ մ'ալ աշխարհ
պիտի գայ և այս անգամ փոխանակ Ե-
րուսաղէմի տաճարը գնալու, իր խարազանը
ձեռքը ուղղալի Եգիպտոս պիտի գայ և ըսէ
ձեզի. «տուննիմ տուն աղօթից կոչեցի և
դուք արարիք զդա այրս աւազակաց» :

Իսկ եթէ Աւետարանի խօսքին փաստ-
հելով մտածէք թէ Գրիստոս ձեր մեղքն-
էն վերջը և շատ աւելի ուշ արդարները
և մեղաւորները դատելու համար միայն
պիտի գայ, կը սխալիք. որովհետեւ նա
աշխարհի վրայ իր փոխանորդն ունի, որը
չէք ուզեր ճանաչել թերեւս. յակայնք ես
ձեզի կրնամ թէ՛ նա ժողովուրդն է :


ԵՂՇԷ

ԱԶԳ



«Արշալոյս» ցրուելի մը պէտքը ունի,
փափաքողները թող դիմեն թերթիս Տնօ-
րինութեան :

ՄԻՍ ԹԷ ՊՏՈՒՂ



Անչո՛ւշա պտուղ, եթէ չէք հաւատար ը-
սածիս, և կ'արեւմտիկէք գիտութիւնը, դէթ
աչքէ անցուցէք խոնարհութեամբ գրքերուն
Գիրքը, աշխարհի հնագոյն Պատմութիւնը, ու-
րաբնութեան, ճշմարտութեան, խորութիւն ու
հրաշալիքներու Յիշատակարանին Ա. գլուխ 27
րդ. համարը, ուր պիտի գտնէք Եգիպտոսի մտք-
ղուն, իտեալ արարածին, հողէն կ'ազատկերու-
ղած կարմիր, կայտառ Աղամին ստանալիքը ու-
նընդատական միակ տարեքննութեան յիշատակու-
թիւնը, որ մասյար գաստարու մէ է պտուղնե-
րուն, մարդուն իսկալ կերակուրներուն :

Առողջաբանութիւնն ու իր ընդհանուր
պատմութիւնը այդ համառօտ խօսքերուն մէջ
կը բովանդակին, այդ սեղմ պարբերութիւնը
չա՛տ աւելի կ'արժէ աշխարհի յեղիցողի վար-
դապետութիւններէն ու գիտութիւններէն - աստ-
ուածային անեղծանելի պատուէր մ'է այն,

կենցաղավարութեան իմաստուն եղանակ մը , զոր անպրօրն զգեցողները զործածելով՝ հարիւրաւոր տարիներ սպրեցան : Երբէք ներկի չէր փոխակերպել այդ երկնապարզ երկնքը , որոյ ներակ զործելը անտարակոյս մեղք պիտի համարուէր : Մեր աչքերէն ծածկուած չեն այսօր անհամար իրական վշտառիտ երեւոյթներն ու ցաւալի հետեւնքներն այդ օրինազանցութեան :

Հողէն ստեղծուած էակը , բնական անջնջելի օրինաց համաձայն՝ որոշ ժամանակ մը հեղուկ կաթ ընդունելէ զինի , ուղղակի փակչելու էր իր հարազատ մօր՝ երկրին թարմ ու գեղեցիկ ստինքներուն , կանաչագոյն ծառերուն ու հաստարմատ բոյսերուն : Մարդն իր անուշակ , զօրացուցիչ կաթը , հաստատուն կերակուելու անցմէ քաղելու էր եւեթ , ինչու որ այդ զըտարար բուսականներուն մաքուր արտադրութեանց մէջ սոսկ կրնար գտնել բաւարար ու համաբաղադրաւոր սնունդ մը իր հրաշագեղ ու համաշահօք կազմութեան : Գուցէ ծիծաղիք պահ մը այս խօսքերուն վրայ , եգիպտոսի փոփոխ ու այրող կլիմային եւ փառք , հոտած , ջրոտ մըտերուն շնորհիւ հարուստի մենաշնորհին արժանացող ձեր կարմրորակ քթերուն՝ չիւրաջընուած տարերքներէ գոյացող գոլորշակերպ հիւթերու զտոցին երկծակ ծորակին առջեւ . . . Թերեւս սրճարաններուն , ըմպելարաններուն ու ճանճակերպ խառնարաններուն . . . մթնշաղկուն ասկանոց եւ կեանքը պղծող մուխին , ծուխին , գարշահոտութիւններուն , ապակահարար վերածխութիւններուն ու գրաստական ծիրեցուցիչ հնչուտ քններուն մէջ քրթմնջելով՝ բամբակէք ու քաշէք զիս , եւ կամ ձեր ճոխ սեղաններուն շուրջը բոլորած՝ խորտիկներն ու գինիները կուտուած ատենիդ , մոռնաք ամեն քաղաքավարութիւն ու ազնուութիւն , ընդդէմ անձիս՝ անկեալ մարդուն փցուն բնաւորութեան թելադրութիւնները ցուցադրելու , եւ ձեր խղճի վշտովտուն բողոքներուն արդար ձիւր ի հեծուկս խեղդելու համար (բացառութիւնք միշտ ի նկատի ունենալով) : Սակայն , հաւաստի եղէք՝ ո՛վ բնութեցողներ , թէ օր մը չարաչար պիտի տուժէք ձեր բոլոր այս ըրածներուն ու անհաւուելի զեղծուածներուն փոխան , եւ ստէպ խղճուող հառաչներ պիտի թռչին ձեր լորձուէքսա , քերուող ու խոնջող կողորդներէն , որոյ իսկական պատճառին ու տխուր արձագանդին շատ ուշադրութիւն պիտի չ'դարձունէ , բխցած , ընդարմացած :

այլապէս ներկայն , բայց յուսաւոր ու պայծառ ապագայն . . . յաւիտեակա՛ն ակնկալ ժամանակը պիտի ողբայ ու դատապարտէ այդ արխուր անցեալը յաւիտեակա՛ն :

Ըսէ՛ք , խնդրեմ , սիրելի բարեկամս , ներած գիտելները հոտոտելէ աւելի՛ չէ՛ք սիրելի այցելել պողովածառին պողպարող ու հրապուրիչ կլիպակը , աչքով , հոտոտելիքով ու քիմքով վախելելու համար այն անուշակ պտուղները՝ որք գերատեղիք արարածներուն գերազանց սնունդները կը կազմեն :

Պէտք է գիտնալ թէ՛ պտուղ ըսելով կ'ըմբռնենք նաեւ բոլոր հատեղէններն ու արմընքները , ըստ որում պտուղ՝ աշխատութեան փոխարինութիւն կը նշանակէ ըստ ստուգարանութեան , եւ որք իրաւամբ մշակին քրտանց արգասիքն են : Այս գաղափարը լուսաւորող եւ մաքրող հաշտեցնող հատընտիր օրինակ մը ունինք Նոր-հոտակարանին մէջ , զոր հոս յիշատակել յարմար կը նկատեմ : « Ուստի համբերող եւ զի՛ք՝ եղբայրներ , մինչեւ Տիրոջը գալուստը . . . անձ՝ երկարաժողով կ'սպասէ երկրի պատուական պատուին , անոր համար համբերելով , մինչեւ որ առաջի ու վերջի անձբերը առնէ : »

Արդի գիտուն ճանչցուած մտքերէն ուսնք այնքան յուսակոտ են , որ չ'պիտի զիջանին դո՛ւ մնալ մեր այս ներկայացուցած սրբազան օրինակէն : Ամեն բան հին ըլլալով հանդերձ , դարձեալ նորութիւն կը փնտռուի զժողովրդարար , այս սկեպտիկ ժամանակաշրջանին մէջ : Մարդիկ չեն սիրել իմաստութեամբ քննել անցեալըն ու անոր պատմութիւնը , որ մայրն է ներկային , եւ որու կը պարտինք միայն մեր գոյութիւնը : Ազնուապոյն ու հաստատուն կեանք՝ փորձառու , մտացի անձնաւորութիւններունն է , եւ անցեալը մեր փորձառութիւնն ըլլալու է յաւելաւ , մանաւանդ երբ աստուածային ու նուիրական է այն :

Սակայն , ուրախ եմ , որ դժուար չ'է դէթ հիմա բուսարանական նորոգ փաստերով եւս ապացուցանել ընդդէմներուն ու արմաքներուն պատուինբու դատաւարդին մէջ դատուելը : Արդի բուսարանք ընդհանրապէս պտուղները երեք դատաւարդի կը բաժնենք :

Կ . ՈՒՋՈՒՆՆԱՆ
(Շարունակելի)

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Աղէքսանդրիայէն ստացուած նամակէ մը , հետեւեալ կարեւոր լուրերը կը քաղենք , որ տեղւոյն Ազգային գործոց կը վերաբերի :

«Մէկ երկու շաբաթէ ի վեր քաղաքին ինչ ինչ շրջանակներուն մէջ տարաձայնութիւն մը կը պտտի , որուն համեմատ իբրեւ թէ թալ . . . Խորհրդոյ փոխ-Ատենապետ Վսեմ . . . Կարապետ Պէյ Բէյիչեկան , չես գիտեր որ ու ազդեցութեան տակ , հրաժարած ըլլայ իր պաշտօնէն եւ ազգային գործերը երեսի վրայ թողած :

Այդ տարաձայնութիւնը , որ գուցէ ազգայնաց ուսնաց անուշ երազը կը կազմէ , բոլորովին չիտակ չէ :

Նախ ըսինք միանգամ ընդ միշտ թէ , Վսեմ . . . Կարապետ Պէյ Բէյիչեկան ո՛ր է ազդեցութիւն կրելու պէտք չունի հրաժարական մատուցանելու համար եւ ներկայ պաշտօնէն մէջ ալ գտնուած չէ Եգիպտոսի մէջ մէկը որ իր վրայ ազդեցութիւն բանցնէ :

Ստոյգ է որ ինչպէս ասկէ առաջ քանիցս , նոյնպէս ալ վերջերս Վսեմ . . . Պողոս փաշային հրաժարական մատուցած է իր ազգայն կառնովը եւ ինք մարտարար , սակայն Նորին Վսեմութիւնը ինչպէս միշտ նոյնպէս ալ այս անգամ բացարձակապէս մերժած է Վսեմ . . . Կարապետ Պէյի հրաժարականը , ինչպէրով շերմապէս որ տակաւին ժամանակ մըն ալ գտնէ բարեհաճի իր պաշտօնը շարունակել , պաշտօն զոր կը վարէ այնքան խղճմտօրէն եւ ձեռնահասօրէն : Անհիմն է ուրեմն այն զրոյցը թէ գործերը երեսի վրայ կը մնան , թէ ժողովներ չեն գումարուիր եւն :

Չենք ուզեր առայժմ խնդիր ընել թէ այդ կարգի զրոյցներ ինչ գիտումներու արձագանքը կրնան նկատուիլ :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ (3)

ԵՐԵԿՈՅԹ ՄԸ ԿԱՄ ՊԱԽԱԼ ՍԱՐԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ

(Շարն . նախորդ քիւնն)

Վեց աղջիկներն ալ եկեր էին , Դիպուածա՛ւ թէ կամա՛ւ , տարիքի կարգով նստեցան՝ աթոռներուն վրայ : Պարզուող տեսարանը մէկ հատիկ էր : Դժուար էր երեւակայել այսչափ հարազատ , անեղծ ու անկեղծ գաւակներ , այնքան չ'ըլլալիք կերպով կը նմանէին իրարու եւ իրենց ծնողաց . ամէնքն ալ մէկ գոյն մէկ ձեւ հագուած , հասակով ու խոշորութեամբ միայն տարբեր իրարմէ՛ մեծէն սկսելով՝ կայծու կը նմանէին այն երթալով պղտիցող տօպիւրուն զորոնք իօփսապանները կը հանեն իրարու մէջէ , եւ փոքրէն սկսելով՝ գաղափարը կը թելադրէին գրքի մը որ իր վեցերորդ ապագութեան հասած ըլլար հատգնետէ յաւելեալ ու ճոխացեալ : Ասոնցմէ կարճ իրարու կուէ ժամանեցին «Տիւրկէր» Սաչիկը , մականուանեալն Ուսսա , «Պէրպէր» Ալէքսանը , հացագործ Համբարը որուն Համբիկ ալ կ'ըսէին , կոչկակար Նշանը , «Միւլաճի» Միւրանը ազգապատկար Միւրիկ ,

երկաթագործ Պողոսը , «Ախթէր» Տարսաւիչը , գինեպան Սեղոսը , «Բազարճի» Սարգիսը որուն Սերջօ կ'ըսէին , «Կապուէճի» Լեւոնը , «Թօհաֆճի» Օննիկը . . . բոլոր ասոնք իրենց մասերով , յաւելուածներով , բարգուծեամբք եւ անանցներով , այսինքն կին , գաւակ , մայր . . . թոյր եւ այլն : Պիտի հարցնէք թէ ինչպէս սղմեցան ատ պղտիկ սենեակին մէջ : Ես ալ կը զարմանամ կոր չեմաղը . բայց Հայերը ինչպէս եւ բոլոր Արեւելցիք վարժուած են իրարու վրայ , քիթ քիթի , ծունկ ծունկի նստելու նեղ տեղուանք . . . Իրաւ է որ սենեակին մէջ Երեւալու տեղ չի կար : Բերանը կրնայ երբեք իս . . . մեղ Հայոցս հերիք է ասիկա : Ըսեմ նաեւ որ ինչի՛նք երեք հատ պոնտոսի միջեք դուր հանած եւ գետինը փրոտած էին . պղտիկները , աղջիկով մանչով հոն եղնուած էին խառն ի խառն , աղբորնքներու պէս :

Երբ ամէն մարդ գէշ աղէկ պիղաւորուեցաւ , երբ էրիկ մարդիկ վառեցին գլանիկը եւ կիները ամփոփեցին իրենց քղանցքները , նայիս սկսաւ լսել , ծօխ , պիտի անվերջ աղմուկ մը : Հետաքրքրական տեսարան մը կը պարզէր սենեակը : Հոն էին է՛ն հեղինակաւոր ներկայացուցիչները , կատարեալ անձնաւորութիւնք հայ ընկերութեան այն վիճակին որ կը գտնուէր այսպէ թաղումն : Կամ ստորին ըսուած դասակարգին եւ միջին . քաղցրեղութեան կամ բուն կենսով դասակարգին մէջտեղ . փոխանցական եւ երկդիմի վիճակ որ յիշեալ երկու խաւերուն հետ կապեր ունի , խնամութիւններ , վերջուղմներ առաջինն եւ ձգտումներ երկրորդին : Ի պահանջը հարկին այդ ծայրի երկու դասակարգերը

սենեակին մէջ կրնայ գէշ աղէկ ներկայացնել մէկ քանի հոգիներ . օրինակի համար , գինեպան Սեղոսը որ ձիւնորութեանէ ճամբայ ելած , «Լանթեռնաճի» ուրեմն մէջ հանգրուանած ասան մը , ի վերջոյ յանգած էր հիմակուան արհեստին , կրնար ինչիցնել առաջինը , մինչ տանաւէրը Պախալ Սարգիս՝ կը ստեղծուէր երկրորդին . այս դասակարգը առաջինին պէս գուտ փողոցային , « դուրս » ու նպրոց չէ , ոչ ալ միւսին պէս լոկ ներքին , խթորովին ընտանեկան : Էրիկ մարդիկ եթէ երկու քովերը ուսած տաքատ չ'են հագնիր , գետ գոտին մէկ կողմ նստած չ'են ն . . . « քոլա » լը շապիկը գրկիցէ չ'են ճանչնար . եթէ պարզ անուսով մը չ'են յիշատակուիր , դեռ մականուն չ'ունին սակայն . ճանտանելի «կան» իր հայկական միօրինակութիւնը անջնջելի « տամզա » յի մը պէս չի կոխեր անոնց անուններուն . ասոնք չ'ունին մեր պատմական շքեղ անուններուն հայրենանուէք փառքը , զոր զարգացած սերունդներ իւրացուցին , ոչ ալ երուպական անուններու օտարամուլ պղծանքն ու պերճանքը . Վահրամ , Վահան , Հայկ , Վաղարշ , Եղուարդ , Էսկառ . . . մանաւանդ կիները որոնք կը կոչուին Թագուկ , Սուրբիկ , Իրաքուէ , Նէմզուր , Հօսօփ , Փառանձեմ , Նեկտար , Սօֆիկ , Ամպէր , Համասիկ , Էպրուկ . . .

Դիտեցէ՛ք սենեակին մէջ գտնուողները : Մեծ մտամբ պարզուկ մտրդեր են , բաց սրտով ու բաց գէ՛տով . բուր միայն մը ունին որ վերացական ըսուածներէն բան մը չ'ըմբռնէր եւ իրականը միայն գիտէ . նախնական մարդեր որոնք վայրենութեանէն դեռ պահած են գեղեցիկ մէկ քանի բաներ , անկեղծութիւն , առաջին

—Մեզ հասած նամակներէն կը տեղեկանանք թէ՛ Տէր Գարրիէլ քահանայ Զէն-ճիւղեան, որ ժամանակէ մը ի վեր Ռուսահայրայէն քաղաքս ժամանած է իր երկու զաւակաց հետ, անցեալ օրեր իր տունին մէջ պատարագ խարսցած — Ս. Պատարագն Ս. Եկեղեցւոյ մէջ կը մատուցուի — և երեք չորս հոգիներու հաղորդութիւն առած է:

Տէր Գարրիէլ քահանայ չուրանար իր այս արարքը որ ըստ բազմաց գայթակեցուցիչ է. սակայն կ'առարկէ թէ Ս. Զատկի օրը հաղորդութիւնը պակասած ըլլալուն համար ինք օգնութեան հասած է. . . .

Եթէ Տէր Գարրիէլ քահանայ գիտնար որ Տէր Մամբրէն այն օրը « Բիւզանդիոն » ին զրկուելիք նամակը ստորագրելով և իր ծուխերուն քանակութիւնը ճշդելով զբաղած էր, թերևս այդ յանդգնութիւնը չընէր. սակայն ինչ որ ալ ըլլայ իր տանը մէջ պատարագ ընող տէրտէրին պատճառները, կ'արժէ որ Գեր. առաջնորդը միանգամ ընդ միշտ վերջ մը գնել մտածէ Ս. Եկեղեցին վարկաբեկ ընող շարժումներու և այս՝ սրչափ կարելի է փութով:

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Կ. Պօլիս 9 Մայիս

Հակառակ Դեպքաններու զօրեղ բողոքներուն, Բ. Դուռը դեռ կը շարունակէ բռնաբարել և բանալ օտար թղթատուններու շնորհիւ Պօլիս մտնող թղթակցութիւնները, և զանոնք ջրուել Օսմանեան փոսթի միջոցով:

Փարիզ 9 Մայիս

Զանազան աղբիւրներէ կ'իմացուի թէ Փարիզի Ռօշիլտեան տունը պիտի ստանձնէ 400,000,000 ֆրանկի մի նոր փոխառութիւն ընել Ռուսիոյ:

Պէտլին 9 Մայիս

Զրոյ կը շրջի թէ Զինատանի Գեր.

շարժումին անզուսպ ցայտը, թօթուրուող բաշխ պէս շքեղ ցատումներուն ձիւքը, և քաղաքակրթութիւնէն առած են նիւթական հանդուսութիւնները և մեծ բարոյացուցիչը՝ ընտանիքը, բայց դեռ բարեբաղդաբար կ'անդիտանան անոր զպրօքը, սալօնը, ֆլորթը (Ալիփարին սկանջը խօսիչ) և . . . անտանելի ֆօլաքը շապիկը. երջանիկ մարդեր որոնք հարստութեան սեղ ունին ստատ առողջութիւն, առատ ու ճոխ արիւն . որոնք շատ կ'աշխատեն քիչ կը վաստկին, բայց աղէկ ալ կուտան կը խմեն. քիչ կը մտածեն բայց ի փոխարէն լաւ կը մարտնեն և լաւ կը քնանան. ժամ կ'երթան, պահք կը բռնեն, ծոմ կը պահեն. շատ կ'օրհնեն շատ ալ կ'անիծեն. շատ կ'աղօթեն շատ ալ կը հայնոյն. բազում կը ծնին և ուշ կը մեռնին. որոնք շուկայի կամ սնական զբաղումներու, օրը օրին հոգեբու կարճ հորիզոնէն անդին ոչինչ կը տեսնան, և երջանիկ կը համարին ինքզինքնին երբ առանց հիւանդութեան կամ սնոթի մնալու « փառք քեզ Աստուած » մը ըսելով և խաչ մը հանելով (էրիկ մարդիկ) կամ « երկու ծունկ աղօթք » ըսելով կ'ինքրը կրնան անկողին մտնալ և խոկալ ամենայն գոհունակութեամբ հոգեոյ և մարմնոյ: Ամէն:

Իրենց ձեւերը, շարժումները լայն են, ազատ, անկաշկանդ, առանց այն սանձին որ շափ կ'ըսուի, կամ ճաշակ, կամ ներդաշնակութիւն: Ասանկ գրական, զեկզեկ բաներ մուսք չ'են կրնար ունենալ իրենց էութեանը մէջ, կ'զգաս թէ շարժած, խօսած ատեննին ո' և է պատկառանք չ'են զգար « քաղաքավարութիւն » քարոզիչն, ո' և է վախ « ամօթ »

ման զինուորները պիտի չ'յապաղին յետաքաշուելու. բազմութիւ պատերազմական նաւեր սակայն պիտի մնան հան, ստիպելու համար Զինատանին որ պատերազմական տուգանքները հատուցանէ:

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Բ. ԽՏԻՎԸ. — Ն. Բարձրութիւն Խտիվը երեկ առաւօտ Ռօշիլտեան պալատը դընացած և կէս օրուան աղօթքը կատարած է Ապու-էլ-Ապպաս մզկիթին մէջ:

Փրէնսէս Զիպէտա Հանրո՛ այսօր իւր ամուսնոյն, Շաքիր փաշայի հետ, Պօլիս կը մեկնի:

ԳԱՐԱՆԹԻՆԱ. Եգիպտոսէն մեկնող նաւերուն համար Յունաստան 48 ժամուան քարանձիւնա հաստատած է. Ուրիշ կառավարութիւններ միայն բժշկական այցելութեան մը կ'ենթարկեն հասնող նաւերը, ի բաց առեալ Թուրքիան, որ նոյնպէս 48 ժամուան քարանձիւնա հաստատած է:

ԹՈՒՐԻՒՄ

Մուսուլէն կը ծանուցանեն թէ՛ Ռաշիտ պէյ անուն Գերար պետ մը՝ Թիարի մէջ 25 քրիստոնեաներ սպաննած և անոնց ոչխարներու ու արջառներու հօտը քշած տարած է:

Այս շահատակութիւններէն վերջ Եէյիս Պէհա-էտտիլի և բազմութիւ քիճքտերու հետ լեռը քաշուած է:

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Մասնաւոր նամակներու նայելով, յայտնի կ'երեւայ թէ Մակեդոնական ապստամբներուն վրայ գործադրելի տանջանքներու լուրը հաստատութիւն պիտի գտնէ:

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅԱԻ

Ազգային Սահմանադրութեան տեսրին վեցերորդ պարկը. եօթերորդը մամլոյ տակ է և առաջիկայ երկուշաբթի կ'աւարտի անոր տպագրութիւնը, որ ութը մեծածալ պրակներէ կը բաղկանայ:

ըսուած ոտակունէն, Նիկար և անարիւն խառնուածքներ գրեթէ չիկան իրենց մէջ: Մեծ մասամբ մտտա են ու արիւնոտ. կ'ենքը՝ արիւններով և անձրեւներով արգասաւորուած բնութեան յաղթական փթթումը ունին, լանջքի, ծիծի յորդ ու շքեղ զարգացում մը, ճոխութիւն մը. . . Այլերը կուրծք ունին ու թիկունք, խոշոր ձեւեր և խոշոր ոտքեր. ֆիզիքական աշխատութեան նշաններ: Դէմքերը չ'ունին այն սուր վերջաւորութիւնը, գեղին կամ կանաչորակ այն մեղեդատիպ դոնյը որ յատուկ է մեր հիմնական գէյ ի հիւժու՛մ ճամբայ կըսած գրող կարգացող երիտասարդներուն. Կարմիր ու կըր երեսներ են. խնամով ամբողջած. անա՛նոր բան մըն ալ զոր չ'են ճանչնար, մօրուքը, ցորչափ ձերացած չ'են: Ամէնքն ալ կ'ամբիւրնին և ինչ հաճոյքով, ինչ ախորժակով. պէրպէս Ալիքսանին հարցուցէ՛ք որուն խանութէն ելած են այս իրիկուն ամենքն ալ: Շաբաթ իրիկուն է:

Էրեկ մարդիկ կը սիրեն ձեռու ընին ազգերնուն վրայ կոթնցներու ձեւը. — ասնկ արմուկները դուրս գարձած, որ ինքնավստահ և ինքզինքը ձող ուժի դիրք մըն է, խուլ սպասնալիքներով լեցուն. « Ֆէսը » քիչ մը ծուռ կը դնեն, ականջին վրայ, մէկ կողմին հակած աշտարակի պէս. կը սիրեն նաեւ մէկ ոտքերնին վեր առնել և միւս ծունկին վրայ դնել ու ձեռքով շփել շփիկ կօշիկը կամ գուլպան եթէ հողաթափ հագած են:

Իրենց մէկ սիրական դիրքն է նաեւ գետինը « պողտալ խուրձի » ընել, կամ երբ բազմոցին վրայ են, ոտքերնին գետնէն վերցնել և ամ-

Մեր Տաճկաստան ազգայնոց ալ օգտակար ընծայելու համար այս հրատարակութիւնը, իւրաքանչիւր հայերէն հատուածի դէմ՝ զեռնարկով և հայաստան թուրքերէնը, ինչպէս լնայի, որ ունի:

ՏՕԲԹԵՕՈՒ ՆԵՎՐՈՒԶ

Իր ընակութիւնը փոխադրած է Շարա-էլ-Մանասի, նորաչէն պանք Սթօմանի գէմի կարգը, Մէլոն Հէլլէր թիւ 28, առաջին յարկ:

Հիւանդ կ'ընդունի բոտ առաջնոյն առաւօտեան ժամը 8-9 և կէս օրէն վերջ ժամը 3 էն 5:

ՎՐԻՊԱԿ

174 թուոյն բանասիրականին չորրորդ սիւնակի վարէն հաշուելով եօթերորդ տարեկան է կարգալ սամուր ֆիւր մը. ըսեմ անմիջապէս. ևն:

Նոյնպէս 175 թուոյն երրորդ էլի առաջին սիւնակին ամենէն վարի տողը ամբողջ, « սոսկալի խառնաշիտքութեան ձեւաւրան » սխալմամբ նոյն երեսի երրորդ սիւնակին ամենէն վարը գրուած է. հետեւաբար առաջին սիւնակի վարէն հաշուելով երրորդ տողին կէսէն սկսեալ պէտք է կարգալ:

« Նաւը Եամպօի մօտերը երբոր ժայռերուն վրայ նստաւ, նաւապետը նաւուն ծխարանին մէջ նստած էր »:

« Սոսկալի խառնաշիտքութեան տեսարան մը տիրեց նաւուն մէջ: Բազմութիւն մէկ քանի զինուորներ ևն »:

ՆԱՄԱԿ ԳԱՆՆԻԷՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

« Արշալոյս » ի 173 թուով պարզ խօսքերու հեղինակ-բաղադրեալ յօդուածագրին կողմանէ, մեկ « ստեղծուածներու » և « ձեռակերտուածներու » փափաքելի պիտի ըլլար նախ

փոփ մը նստիլ, մէկ ոտքը տակերնին և միւսը կանգուն: Այս նստուածքները կային տնայ սենեակին մէջ. քրքան հետու կը սալօնի կապկութիւններէն:

Ուրեմն գէյ աղէկ ամէնքն ալ տեղաւորուած էին. և ծուխը, շունչերը, քրտնցնող կրակը և քրտնող մաի շոգիացումները կը լեցնէին սենեակը բաղնիքի սաքութեամբ մը ու միջոցորտով: Սենեակը կը խնդար դրսի ձմեռուան քիթն ու դուրսը « փառացող » Սուրբ Սարգիսին մօրուքին: Բազմոցին անկիւնէն Պարսալ Սարգիս՝ ծալապատիկ նստած՝ կուրծքը և փորը առաջ ու գլուխը վեր ու կտու, իր ֆիզիքական ու ընկերական անձերուն բազմապատկեալ կարեւորութեամբքը բարդեալ և բաղադրեալ հեղինակութիւններով՝ արժանաւորապէս կը նախազանէր այս նշանաւոր ակումբին: Մուսի շնչաւ մը արձակեց և ըսաւ. — է՛, աղաքներ, չի խօսի՞ք նայինք. ինչ կայ չի կայ:

Եւ խօսակցութիւնը սկսաւ:

(Շարունակելի)

ԴԻՏԱԿ

ԴՈՐԾԱԻՍՐՈՒՀԻ ԿՈՒՉՈՒԻ

Դերձակուհի Տիկին է. Ա. Ասլանեանի Աղղղիկին համար գարձաւորու հինգրու պէտքը կայ. փափաքողը կրնան գիմել իրեն բնակարանը ի Պապ-էլ-Լուք Հէլուանի կայարանին անկիւնը:

